ՊՂՆՁԷ ԴՐԱՄՆԵՐԻ ԳԱՆՁ՝ ԱՐՏԱՇԱՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

Ռուբէն Վարդանեան

Արտաշատի 2005 թ. հնագիտական պեղումների ընթացքում Արաքսի ափին բացուող համալիրում յայտնաբերուեց 56 պղնձէ դրամների գանձ: Դրամները գտնուել են հարթակի յենապատին կից 1-ին սենեակի արեւմտեան անկիւնում՝ յենապատի պահպանուած մասից 65 սմ խորութեան վրայ: Պեղուող հատուածն ամէն տարի գարնանը հեղեղւում է գետի ջրերով եւ դրամները մշտապէս գտնուել են խոնաւ միջավայրում: Ըստ երեւոյթին, սկզբնապէս նրանք զետեղուած են եղել ինչ-որ փաթեթի, գուցէ՝ քսակի մէջ, քանի որ մի քանիսը յայտնաբերուել են կիպ կպած, սերտաճած վիճակում: Դրամները թէեւ դարեր շարունակ գտնուել են խոնաւութեան մէջ, բայց մեծ խորութիւնը (գետնի ներկայ մակարդակից մօտ 3 մետր) եւ օդազուրկ կաւային միջավայրում լինելու հանգամանքը նրանց պահպանել են խիստ քայքայումից: Մաքրելուց յետոյ պարզուեց, որ գանձի 56 դրամներից 2-ը Անտոնինուս Պիուսի ասարիոններ են, մէկը՝ խիստ քայքայուած, անորոշ, իսկ 53-ը Անտիոքի SC թողարկումների բարբարոսական ընդօրինակութիւններ են, որոնք պատրաստուել են ձուլման եղանակով, պղնձային համաձուլուածքից: Դրամները պատուած էին յաջորդաբար սեւ բրոնզափառով, բաց մոխրագոյն նստուածքով, որի վրայ տեղ-տեղ, կղզեակների ձեւով, կպած էին մաքուր պղնձի նուրբ թիթեղիկներ (նկ. 6.1): Այս ամէնը ծածկուած էր կանաչաւուն ժանգով եւ հողային նստուածքով[1]:

1 Դրամներից 7-ը (№ 7, 11, 17, 30, 40, 42, 53) մաքրել է Վարդան Վարդանեանը (ԵՊՀ)՝ քիմիական եղանակով, 3-ը (№ 23, 24, 47)՝ Ռուբէն Վարդանեանը՝ քիմիական եղանակով, բայց մաքրումը դադարեցնելով այն պահից, երբ ի յայտ եկան պղնձէ թիթեղիկները: Մնացած դրամները մաքրել է Լենա Աթոյեանը (ՀՊԹ)՝ մասամբ քիմիական եւ հիմնականում՝ մեխանիկական եղանակով:

Գանձի դրամների ցուցակը

Անտոնինոս Պիոս, 138-161 թթ.:

Բրոնզ, ասարիոն: Աքայա. Կորնթոս:

Դիմ.՝ [A]NTONINV[S A]V[G] PIVS: *Կայսրի գլուխը՝ աջ, դափնեպսակով:*

Դարձ.՝ Պեգասը թռչելիս, աջ: Վերեւում՝ C[L]I, ներքեւում՝ COR:

Katharine M., Edwards, Corinth. Vol. VI. Coins (1896-1929), Cambridge, Massachusetts, 1993, Coins of Corinth as a Roman Colony, Antoninus Pius, 138-161, no. 134 (նկարը տրուած չէ): Roman Provincial Coinage Online-ում այս թողարկումը բացակայում է:

1. 7.45 գ, 21.5 մմ, 9 ժ, ՀՊԹ 20078/1

Անտոնինոս Պիոս, 138-161 թթ.:

Բրոնզ, ասարիոն: Սիրիա. Սելեւկիս եւ Պիերիա. Լաոդիկէա:

Դիմ.՝

[A]YTO.KAIC.TI.[AIΛI. ANTΩNEINOC]: *Կայսրի գլուխը՝ աջ, դափնեպսակով:*

Դարձ.՝

IO[Ψ⊄IEΩN TΩN KAI ⊄]AO[⊗IKEΩN]: *Տիխէի կիսանդրին՝ ձախ, պարսպաթագով:*

Sear D., Greek Imperial Coins and their values, London, 1982, no. 1497, բայց դիմերեսին՝ կայսեր ձախ կիսադէմով:

2. 8.12 գր, 27.6 մմ, 11 ժ, ՀՊԹ 20078/2

Հռոմի պրովինցիալ SC թողարկումների (Սիրիա. Սելեւկիս եւ Պիերիա. Օրոնտէսի Անտիոք) բարբարոսական ընդօրինակութիւններ:

Դիմ.՝ աջ կիսադէմ, պատկերագրական մանրամասներն անորոշ են, յաճախ՝ դափնեպսակով:

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

3. 2.50 գր, 25.5 մմ (թերի), ՀՊԹ 20078/3
4. 3.10 գր, 24.7 մմ, 11 ժ, ՀՊԹ 20078/4
5. 3.62 գր, 26.7 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/5
6. 3.89 գր, 26.5 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/6
7. 4.62 գր, 25.5 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/7
8. 4.63 գր, 24.2 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/8
9. 4.67 գր, 26.2 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/9
10. 5.11 գր, 24.8 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/10
11. 5.15 գր, 25.6 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/11
12. 5.27 գր, 26.2 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/12
13. 5.38 գր, 25.2 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/13
14. 5.60 գր, 26.3 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/14
15. 5.79 գր, 25.8 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/15
16. 5.82 գր, 25.0 մմ, 11 ժ, ՀՊԹ 20078/16
17. 5.82 գր, 27.6 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/17
18. 6.14 գր, 26.1 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/18
19. 6.21 գր, 24.9 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/19
20. 6.36 գր, 26.0 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/20
21. 6.53 գր, 26.8 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/21
22. 6.57 գր, 26.1 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/22
23. 6.90 գր, 25.3 մմ, 12 ժ, ՀՊԹ 20059/2
24. 7.13 գր, 26.4 մմ, 1 ժ, ՀՊԹ 20059/3

Դիմ.՝ նոյնը:

Դարձ.՝ նոյնը, բայց S տառը շրջուած՝ Ƨ *C:*

25. 4.96 գր, 25.3 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/23
26. 5.88 գր, 26.3 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/24
27. 5.97 գր, 25.5 մմ, 9 ժ, ՀՊԹ 20078/25
28. 6.58 գր, 25.5 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/26
29. 7.24 գր, 25.9 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/27
30. 8.01 գր, 26.2 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/28

Դիմ.՝ աջ կիսադէմ (ինչպէս կից նկարում), դափնեպսակով:

№ 37

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

31. 5.69 գր, 24.3 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/29
32. 5.76 գր, 26.3 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/30
33. 6.04 գր, 23.0 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/31
34. 6.05 գր, 25.8 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/32
35. 6.27 գր, 26.1 մմ, 1 ժ, ՀՊԹ 20078/33
36. 6.60 գր, 26.6 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/34
37. 7.69 գր, 26.0 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/35
38. 9.37 գր, 26.5 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/36

Դիմ.՝ նոյնը:

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

39. 5.70 գր, 25.4 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/37

Դիմ.՝ աջ կիսադէմ (ինչպէս կից նկարում), դափնեպսակով:

№ 42

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

40. 7.35 գր, 26.2 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/38
41. 8.44 գր, 26.8 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/39
42. 9.09 գր, 26.7 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/40

Դիմ.՝ աջ կիսադէմ (ինչպէս կից նկարում), դափնեպսակով:

№ 49

© National Library of Armenia

Դարձ.՝ S տառը շրջուած՝ Ƨ C, շուրջը՝ պսակի նմանակում:

43. 4.19 գր, 24.5 մմ, 11 ժ, ՀՊԹ 20078/41
44. 6.43 գր, 26.3 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/42
45. 5.80 գր, 25.4 մմ, 11 ժ, ՀՊԹ 20078/43
46. 6.00 գր, 25.0 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/44
47. 6.03 գր, 25.8 մմ, 12 ժ, ՀՊԹ 20059/1
48. 6.08 գր, 26.1 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/45
49. 6.81 գր, 26.7 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/46

Դիմ.՝ ձախ կիսադէմ, դափնեպսակով:

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

50. 6.71 գր, 25.2 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/47

Դիմ.՝ ձախ կիսադէմ, գագաթին «մազափնջով»:

Դարձ.՝ S տառը շրջուած՝ Ƨ C, շուրջը՝ պսակի նմանակում:

51. 6.78 գր, 25.8 մմ, 6 ժ, ՀՊԹ 20078/48

Դիմ.՝ աջ կիսադէմ, ճառագայթաւոր պսակով:

№ 53

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

52. 7.22 գր, 27.5 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/49
53. 7.89 գր, 28.6 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/50
54. 8.22 գր, 27.5 մմ, 3 ժ, ՀՊԹ 20078/51

52-54-ը ձուլուած են նոյն կաղապարի մէջ:

Դիմ.՝ արծիւ՝ թեւատարած, գլուխը աջ:

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

55. 6.88 գր, 25.5 մմ, 12 ժ, ՀՊԹ 20078/52

Դիմ. եւ դարձ.՝ խիստ մաշուած, անորոշ:

56. 4.03 գր, 23.0 մմ, ՀՊԹ 20078/53

Դարձերեսին՝ դափնեպսակի մէջ, մեծ SC տառերով պատկերատիպ ունեցող դրամների թողարկումն Անտիոքում սկսուել է Օգոստոս կայսեր օրօք, շուրջ Ք.ա. 5 թ.[2] *եւ շարունակուել է աւելի քան երկու հարիւրամեակ: Այդ դրամները, դիմերեսին ունենալով Հռոմի կայսեր դիմապատկերը, հատուում էին Հռոմի սենատի որոշմամբ՝ S(enatus) C(onsultum), եւ հանդիսանում էին կայսրութեան՝ արեւմուտքում թողարկուող սենատորական բրոնզէ դրամների արեւելեան համարժէքը*[3]*: Դրանք շրջանառուել են ոչ միայն Սիրիայում, այլեւ նրա սահմաններից դուրս, այդ թւում՝ Հայաստանում: SC բրոնզների վրայ, բացառապէս լեգիոներական մակագրոյմների առկայութիւնից ելնելով, դրանք համարւում են, հիմնականում, բանակի կարիքների համար կատարուած թողարկումներ, թէեւ որոշակի ռազմական արշաւների հետ սերտօրէն չեն կապւում:*[4] *Օգոստոսից սկսած մինչեւ Մարկոս Աւրելիոսը (161-180 թթ.), SC բրոնզները հատուել են բոլոր կայսրերի ժամանակ: Դրանից յետոյ եւս, որոշ ընդմիջումներով, Անտիոքում շարունակուել է SC դրամների թողարկումը մինչեւ Սեւերոս Ալեքսանդրը (222-235 թթ.):*

Նախքան ընդօրինակութիւնների քննարկումն սկսելը, արժէ անդրադառնալ Արտաշատում յայտնաբերուած հռոմէական դրամներին: Մենք կը սահմանափակուենք ՀՊԹ ժողովածոյով եւ միայն այն նիւթով, որի վերաբերեալ կան ստոյգ կամ

2 *Roman Provincial Coinage* I, London-Paris, 1992, pp. 13, 620.

3 **H. Mattingly,** *Roman Coins*, London, 1960, p. 191.

4 *Roman Provincial Coinage* I, p. 14.

վստահութիւն ներշնչող տուեալներ յայտնաբերման վայրի մասին:

ՀՊԹ-ում պահւում է Արտաշատում գտնուած 28 հռոմէական արծաթէ դրամ.

	Հնագիտ. պեղումներից	Պատահական
Լ. Պոցցիլիոս, 80 Ք.ա.		1
Մ. Անտոնիոս		2
Մ. Անտոնիոս -Օգոստոս		1
Օգոստոս	2	13
Ներոն	1	
Վեսպասիանոս	1	2
Տիտոս		1
Տրայանոս	2	1
Պեսկենիոս Նիգեր		1

ՀՊԹ-ի ժողովածոյի մէջ Արտաշատում յայտնաբերուած հռոմէական պղնձէ դրամները 30-ն են:

	Հնագիտ. պեղումներից	Պատահական
Օգոստոս	6	1
Կլաւդիոս	1	
Ներոն°	2	1
Օթոն	1	
Վեսպասիանոս		1
Դոմիտիանոս	1	1
Տրայանոս	5	5
Անտոնինոս Պիոս	2 (սոյն գանձից)	1°
Սեպտիմիոս Սեւերոս	1 (թող. 206 թ.)	
Էլագաբալ		1

Եղած նիւթը դեռեւս բաւարար չէ Արտաշատում հռոմէական դրամների ներկայութեան մասին հաստատուն եզրայանգումներ անելու համար. այդ նիւթը, յուսանք՝ միայն հնագիտական պեղումների շնորհիւ, դեռեւս աճելու եւ փոփոխուելու միտում ունի: Այդուհանդերձ, նրանում որոշ օրինաչափութիւններ նկատւում են: Կարող ենք փաստել, որ արծաթէ 28 դրամներից 23-ը (82%) եւ պղնձէ 30 դրամներից 25-ը (83%) վերաբերում են Օգոստոսից Տրայանոսն ընկած ժամանակահատուածին: Տրայանոսից յետոյ հռոմէական դրամների քանակը կտրուկ նուազում է: Կարելի է շատ հաւանական համարել, որ հռոմէական դրամները, մասնաւորապէս պղնձէ դրամները, Հայաստան էին մտնում ոչ այնքան խաղաղ ժամանակ, առեւտրի միջոցով, որքան հռոմէական բանակի հետ եւ, առաւելապէս, նրա կարիքների համար: 114-117 թթ. հռոմէական պրովինցիայի վերածուած Հայաստանը Հադրիանոսը կրկին դարձրեց թագաւորութիւն եւ յետ քաշեց զօրքը: Շուրջ 40 տարի տեւած, հիմնականում խաղաղ, ժամանակահատուածի համար Արտաշատում ունենք չափազանց քիչ հռոմէական դրամներ, ինչը կարող է բացատրուել Հայաստանում հռոմէական զօրքի բացակայութեամբ: 163 թ. Արտաշատը վերագրաւուեց Հռոմի կողմից, եւ կարելի էր սպասել, որ Մարկոս Աւրելիոսի ու Լուկիոս Վերոսի, ինչպէս նաեւ նրանց մօտակայ յաջորդների դրամները պէտք է լաւ ներկայացուած լինէին արտաշատեան գտածոներում, սակայն առայժմ այդպէս չէ: Աւելին, վերոյիշեալ երկու կայսրերի դրամներն առհասարակ բացակայում են: Պատճառը կարող է լինել այն, որ Արտաշատում յայտնաբերուած դրամագիտական նիւթը դեռեւս լիովին չի արտացոլում դրամաշրջանառութեան պատկերն այդ քաղաքում, իսկ գուցէ մասամբ այն, որ 163-166 թթ. պատերազմից յետոյ հռոմէական կայազօրը տեղակայուել էր ոչ թէ Արտաշատում, այլ Վաղարշապատ-Կայնեպոլսում:

© National Library of Armenia

Արտաշատում գտնուած պղնձէ դրամների կէսը (15 դրամ) վերաբերում են Օգոստոսից մինչեւ Դոմիտիանոսն ընկած ժամանակահատուածին, եւ ուշագրաւ է, որ բոլորն էլ Անտիոքի թողարկումներ են: Միւս կէսի գերակշիռ մասը Տրայանոսի դրամներն են: Նկատենք, որ այս կայսեր 10 դրամներից միայն մէկն է հատուած Անտիոքում, մինչդեռ 7-ը գալատական[5] եւ պոնտական դրամներ[6] են: Դրամների այսպիսի ծագումը, կարծում ենք, պատահական չէ եւ արտացոլում է Տրայանոսի ռազմերթի ուղղութիւնը: Գրաւոր աղբիւրներից յայտնի է, որ 114 թ. Հայաստանի դէմ ռազմարշաւը սկսելով Անտիոքից՝ Հռոմի կայսրն ընտրեց հիւսիսային ուղին (Մելիտինէ-Սատաղ-Արտաշատ)[7] անցնելով այն երկրներով կամ նրանց անմիջական հարեւանութեամբ, որտեղ թողարկուել եւ հիմնականում շրջանառւում էին վերոյիշեալ դրամները:

Հետագայում, նոր գտածոների շնորհիւ, գուցէ ունենանք Արտաշատում շրջանառուած դրամների կազմի վերաբերեալ աւելի ամբողջական պատկերացում, բայց այսօր պէտք է արձանագրենք, որ Բ դարում անտիոքեան թողարկումներն այստեղ նոյնպիսի «մենաշնորհային» դիրքում չեն եղել, որքան Ա դարում: Ընդհանուր առմամբ, Արտաշատում յայտնաբերուած 59 դրամներից[8] 50-ը (84%) թուագրւում են Բ.ա. Ա դ. վերջին տասնամեակից մինչեւ Բ դ. երկրորդ տասնամեակը: Պէտք է նկատել, որ հռոմէական դրամների աւելի քան 90%-ը ծագում են Արտաշատի բլուրներից, դեռ բազանցապէս VIII բլուրից, եւ թուագրւում են մինչեւ Տրայանոսը ներառեալ, մինչդեռ դաշտային մասում (բաղնիքում եւ շրջակայքում) յայտնաբերուած 4 դրամներից 3-ը վերաբերում են աւելի ուշ ժամանակի՝ Բ դ. երկրորդ կէսին - Գ-ի սկզբին (Անտոնինոս Պիոսի 2 պղնձէ դրամ՝ սոյն դանձից եւ Սեպտիմիոս Սեւերոսի մէկ պղնձէ դրամ՝ բաղնիքից): Սա կարող է նշանակել, որ Արտաշատի, մասնաւորապէս ցածրադիր մասերում, հետագայ պեղումների շնորհիւ դրամագիւտերի տեղագրական եւ ժամանակագրական բաշխման պատկերը հնարաւոր է հարստանայ Բ-Գ դարերի վերաբերեալ նոր տուեալներով, որոնք, առայժմ, չափազանց սակաւ են:

Ինչ վերաբերում է Անտիոքի SC թողարկումներին, որոնք այս դանձի քննութեան առնչութեամբ մեզ հետաքրքրում են առաւել, ապա կարող ենք փաստել հետեւեալը. Օգոստոսից մինչեւ Անտոնինոս Պիոսը, 17 անտիոքեան դրամներից առնուազն 11-ը (64%) SC թողարկումներն են[9]: Այսինքն, այստեղ շրջանառուած հռոմէական պղնձէ դրամների շարքում սրանք ամենատարածուածը եւ ամենաճանաչուածն էին[10], որն, անկասկած, իր դերը խաղացել է ընդօրինակելու համար հէնց այդ թողարկումներն ընտրելու հարցում:

Չափագիտութիւնը: *Ընդօրինակութիւնների կշիռը տատանւում է 3-9.5 գր սահմաններում, սակայն 52 հաշուառուած օրինակներից 34-ի (65%) կշիռը 5.5-7 գրամ է, միջին կշիռը՝ 6.19 գր: Ընդօրինակութիւններն ունեն 23-28.5 մմ տրամագիծ, բայց 53 հաշուառուած դրամներից 42-ի (79%) տրամագիծը 25-26.5 մմ է, միջին առաւելագոյն տրամագիծը՝ 25.8 մմ: Այս հաշուարկների մէջ ներառելով նաեւ սիրիական ժողովածոյի 6 օրինակների տուեալները (այս դրամների մասին տե՛ս ստորեւ), կշռի եւ տրամագծի միջին ցուցանիշներն են, համապատասխանաբար՝ 6.17 գր (58 դրամի հաշուարկով. կոտրուած եւ թերի կշռով օրինակը՝ № 3, հաշուի չի առնուած) եւ 25.8 մմ (59 դրամի հաշուարկով):*





Անտիոքում թողարկւում էին երկու արժէչափի SC դրամներ՝ 2 ասարիոն (կամ դուպոնդիուս), շուրջ 25-28 մմ տրամագծով, 14-15 գր կշռով եւ 1 ասարիոն՝ շուրջ 20-23 մմ տրամագծով, 6-7 գր կշռով: Այս ընդօրինակութիւններն իրենց միջին կշռային տուեալով համապատասխանում են Անտիոքում եւ արեւելեան միւս պրովինցիաներում թողարկուած պղնձէ (բրոնզէ, արոյրէ) դրամներին, որոնք շրջանառուել են հռոմէական 1 ասարիոնին հաւասար անուանական արժէքով: Սակայն ընդօրինակութիւնների հատաձոյլերն աւելի տափակ են ու մեծ եւ չափով մօտ են 2 ասարիոնին: Եթէ այս դրամները պատրաստուել են փոխարինելու համար նմանատիպ իսկական թողարկումները, ապա, կշռից ելնելով, կարելի է ենթադրել, որ դրանք աւելի շուտ համապատասխանել են 1 ասարիոնին: Նկատենք նաեւ, որ սրանց հետ գտնուած Անտոնինոս Պիոսի երկու դրամներն իրենց չափագիտական տուեալներով նոյնպէս համապատասխանում են 1 ասարիոնին:

Դիմերեսի եւ դարձերեսի առանցքային յարաբերութիւնը թէեւ անկանոն է, բայց գերակշռողը 11-1 ժամ դիրքն է՝ 52-ից 39-ը (75%):

SC ընդօրինակութիւնների պատկերագրութիւնը: *Թէեւ Անտիոքի SC դրամների դիմերեսին Հռոմի կայսեր գլուխն էր կամ կիսանդրին, եւ դիմապատկերներն ու գրութիւնները, բնականաբար, տարբեր էին, բայց դրամներից օգտուողների մեծա-*

---

5 Դրամները թողարկուել են Գալատիայի եւ Կապադովկիայի լեգատ Պոմպոնիուս Բասսուսի օրօք. ՀՊԹ 19878/45, 19878/50 (պեղումներից), 19992/124 (պատահական):

6 Դրամները թողարկուել են Պոնտոսի Նիկոպոլիս քաղաքում 105/6 թ.. ՀՊԹ 19878/2 (պեղումներից), 19992/117 եւ 118, 19993/31 (պատահական):

7 **Յ. Մանանդեան,** *Երկեր,* հտ. Բ, Երեւան, 1978, էջ 27-28, *Հայ ժողովրդի պատմութիւն,* հտ. 1, Երեւան, 1971, էջ 771-772:

8 28 արծաթէ եւ 31 պղնձէ դրամները, գումարած Արտաշատ մայրաքաղաքի հարեւանութեամբ այժմ գտնուող Նոր Կեանք գիւղի դաշտով հոսող գետի ափից 1981 թ. գտնուած Ներոնի ոսկէ դրամը, ՀՊԹ 19107:

9 Արտաշատում յայտնաբերուած անտիոքեան SC թողարկումները.

	Պեղումներից	Պատահական
Օգոստոս	2 ՀՊԹ 19968/2, 20051	
Կլաւդիոս	1 ՀՊԹ 19793/2	
Ներոն°	2 ՀՊԹ 19878/25, 19878/26	1 ՀՊԹ 19992/112
Վեսպասիանոս		1 ՀՊԹ 19992/108
Դոմիտիանոս	1 ՀՊԹ 19878/14	1 ՀՊԹ 19992/107
Տրայանոս	1 ՀՊԹ 19878/17	
Անտոնինոս Պիոս		1 ՀՊԹ 19992/111

Եւս երկու դրամ (ՀՊԹ 19878/8 եւ 19878/9, պեղումներից), մաշուածութեան եւ մակադրոշմների պատճառով, անորոշ են: Մէկ այլ դրամ (ՀՊԹ 19992/140, պատահական) SC բարբարոսական ընդօրինակութիւն է, բայց տարբերւում է ոճով:

10 ՀՊԹ ժողովածոյի մէջ կայ անտիոքեան երեք SC դրամ՝ յայտնաբերուած ներկայիս Հայաստանի այլ վայրերից. Ներոն°, ՀՊԹ 19327/1, Օթոն, Ջորափ գիւղ (Աշտարակի մօտ), ՀՊԹ 18073, Տրայանոս, Ն. Գետաշէն գիւղ (Մարտունու մօտ), ՀՊԹ 14720:

© National Library of Armenia

մասնութիւնը, դժուար թէ, ի վիճակի էր տարբերել մի կայսրին միւսից, առաւել եւս՝ գլուխ հանել յապաւումներով տրուող գրութիւնների բովանդակութիւնից. կարեւորն այն էր, որ դրամի վրայ Հռոմի կայսրն է պատկերուած: Մինչդեռ պսակով շրջապատուած SC տառերը Հռոմի իշխանութեան անփոփոխ եւ հեշտ ճանաչելի խորհրդանիշն էին, նոյնիսկ անկախ այն բանից, թէ որ կայսրի օրօք էր թողարկուած դրամը:

Հէնց այդ պատճառով նմանակողներն ընտրել են բնօրինակի այնպիսի տարբերակ, որը լաւ ծանօթ լինի հանրութեանը եւ, ձեռքի տակ չունենալով հմուտ վարպետներ՝ հեշտ իրագործելի: Մենք կարող ենք միայն ենթադրութիւններ անել այն մասին, թէ ում, ինչ իշխանութեան կողմից են պատրաստուել այս դրամները, բայց ակնյայտ է, որ, որպէս իր թողարկման օրինականութեան գրաւական, ընդօրինակողը ցանկացել է ներկայացնել ու շեշտել հէնց այդ խորհրդանիշը, բաւական անփոյթ վերաբերուելով Հռոմի իշխանութեան միւս, այդ ժամանակներում իրական, խորհրդանիշին՝ կայսեր պատկերին:

Դարձերեսի տիպը՝ կենտրոնում SC տառերը եւ դրանք շրջապատող պսակը յիշեցնող գծիկներ, աւելի մօտ է անտիոքեան նախատիպին՝ թերեւս իր պատկերագրական պարզութեան պատճառով: Ճիշտ է, որոշ օրինակների վրայ S-ը գրուած է շրջուած՝ Ƨ, բայց բոլոր դրամների վրայ երկու տառերն էլ պարզ ու յստակ երեւում են: Ի տարբերութիւն դիմերեսի պատկերի ու, յաճախ, դարձերեսի պսակի մակերեսային պատկերմանը, SC տառերը միշտ ունեն բարձր ռելիեֆային պատկերում: Կարծում ենք՝ դա պատահական չէ: Սոյն դրամների ամբողջ, այսպէս ասած, պատկերագրութեան մէջ այդ տառերն ամենակարեւորն էին, քանի որ հէնց դրանք էին, որ պէտք է ստեղծէին թողարկման օրինականութեան պատրանք:

53 ընդօրինակութիւններից 52-ը դիմերեսին ունեն կիսադէմ պատկեր, մէկը՝ արծիւ (№ 55): 51 դրամի վրայ պատկերուած է աջ կիսադէմ, միայն երկուսի վրայ (№ 50, 51)՝ ձախ: Դրանք հռոմէական կայսրերի դիմապատկերների անվարժ ձեռքով արուած վերարտադրութիւններ են: Ընդօրինակութիւնները ներկայացնում են Հռոմի կայսեր երկու պատկերագրական տիպերը՝ դափնեպսակով եւ ճառագայթաւոր պսակով:

Դափնեպսակով տիպը գերակշռում է: Այն ներկայացնող դիմապատկերները բազմազան են, նոյն կաղապարով թողարկուած օրինակները քիչ են: Հռոմէական իսկական դրամների վրայ դափնեպսակի գագաթային մասի երկու տերեւները յաճախ ներկայացւում էին բաւական ընդգծուած եւ ցցուն տեսքով: Քանդակագործական հմտութիւններից զուրկ մարդկանց համար, ինչպիսիք էին այս ընդօրինակութիւնների կաղապարները պատրաստողները, գլխի գագաթին կամ ճակատից քիչ վեր երեւացող երկու, հաղուադէպ՝ երեք, վեր ցցուած գծիկների պատկերումը «դիմապատկերին» հռոմէական տեսք հաղորդելու հեշտ եւ արդիւնաւէտ եղանակ էր: Ընդօրինակութիւնների վրայ, որպէս կանոն, ցայտուն են պատկերուած նաեւ դափնեպսակի ժապաւէնները՝ երկու զուգահեռ ուղիղ կամ կոր գծերի տեսքով: Դէմքի ֆիզիկական նմանութեան հիման վրայ որեւէ կայսրի հետ նոյնացումը վստահօրէն հնարաւոր չէ, քանի որ դրանք չափազանց պարզունակ են, կոպիտ, երբեմն՝ «ծաղրանկարային»: Պատկերման ծայրայեղ պարզունակութեան պատճառով դժուար է աներկբայօրէն մատնանշել, թէ որ կայսրերի դրամներից են կատարուել նմանակումները: Ընդօրինակողներին, այդուհանդերձ, որոշ դէպքերում յաջողուել

է վերարտադրել մոդելից ստացուած տպաւորութիւնը: № 39 եւ № 31-38 շարքի դրամների դիմապատկերները կարելի է նմանեցնել Տիտոսի, Դոմիտիանոսի կամ Ներուայի դիմապատկերներին: Այս դրամներում դափնեպսակի ժապաւէնների պատկերման եղանակն աւելի, քան միւսներում, նման է Ա դարի երկրորդ կէսի անտիոքեան SC թողարկումների լայն, ուղղաձիգ կախուած ժապաւէններին (№ 31-38): Հետագայ կայսրերի դիմապատկերներում դափնեպսակի ժապաւէնները տրուած են աւելի բարակ, յաճախ ալիքաւոր գծերով: Վերոյիշեալ խումբը եւ մէկ այլ խումբ (№ 40-49 եւ, գուցէ՝ № 39) գլխի պատկերման եղանակով մօտ են միմեանց, բայց երկրորդում պսակի ժապաւէնները տրուած են երկու զուգահեռ թեք գծերով: Ալիքաւոր թեք գծերով պատկերուած ժապաւէնների հանդիպում ենք Բ դարի կայսրերի դիմապատկերներում (երբեմն՝ Տրայանոսի, աւելի յաճախ՝ Հադրիանոսի դրամների վրայ): Կարծես թէ Տրայանոսի դիմապատկերն են յիշեցնում № 40-49 շարքի պատկերները: Երկու խմբում էլ բաւական շեշտուած է ներկայացուած կայսրի ականջը:

Որոշ դիմապատկերներ, թւում է, քիչ թէ շատ իրատեսական ոճով են արուած, սակայն չափազանց ցածր ռելիեֆը, ուրուագծերի աղօտութիւնը թոյլ չեն տալիս դատել դրանց նախատիպերի մասին (№ 8, 12, 26): Այնուամենայնիւ, № 13-ը կարծես յիշեցնում է Անտոնինոս Պիոսի դիմապատկերը:

Գանձում կայ ընդամէնը երկու դրամ, որոնց դիմերեսին տեսնում ենք ձախ կիսադէմով պատկեր: № 50-ի պատկերը դափնեպսակով տիպից է. ճակատից վեր երեւում են պսակի երկու տերեւները՝ վեր ցցուած գծիկների տեսքով, գլխի հետեւում՝ շեղօրէն կախուած երկու ժապաւէնները: SC շարքի անտիոքեան թողարկումներում կայսեր գլուխը աւելի յաճախ պատկերուած է լինում դէպի աջ, սակայն կան թողարկումներ նաեւ ձախ կիսադէմով: Ուստի սա ընդօրինակուած է կա՛մ ձախ պրոֆիլով անտիոքեան դրամից, կա՛մ կաղապար պատրաստողը սխալուել է՝ դէմքը պատկերելով այն ուղղութեամբ, ինչպէս տեսել է դրամի վրայ, այսինքն՝ այնպէս, ինչպէս երբեմն սխալուել են S տառը փորագրելիս[11]:

Աւելի ուշագրաւ է № 51 դրամը: Կարելի էր կարծել, թէ այն ընդօրինակուել է ձախ պրոֆիլով մի նմուշից, սակայն պատկերագրութիւնը յուշում է, աւելի շուտ, պարթեւական ազդեցութեան մասին: Գլխի գագաթին նկատելի է կլորաւուն, դէպի վեր լայնացող ուրուագծով «բարձիկ», որը յիշեցնում է պարթեւական արքայ Խոսրով Ա-ի (109-129 թթ.) սանրուածքը՝ գագաթին ապարօշով կապուած մազափունջ[12]: Հետագայում սանրուածքի այդ ձեւը կրկին յայտնուեց Վաղարշ Ե-ի դրամների վրայ (191-208 թթ.)[13]: Բ դ. ընթացքում եւ Գ-ի սկզբում այդ սանրուածքն ընդօրինակեցին նաեւ պարթեւական ոլորտի մի քանի արքայիկներ Պարսքում, Էլիմայիսում, Մարգիանէում[14]: Պարթեւական դրամական պատկերագրութեանը բնորոշ արքայի գլխի՝ դէպի ձախ ուղղուածութեան եւ իւրայատուկ սանրուածքի համատեղումն այս նմուշի վրայ վկայում է, որ տուեալ դէպքում դիմերեսի համար ընդօրինակ-

11 Դրամի վրայ SC տառերը ստանալու համար, կաղապարի մէջ պէտք է փորագրուէր Ƨ, սակայն փորագրուել է Ƨ: Հակուած եմ կարծելու, որ դա միտումնաւոր չի արուել, այլ անգիտութեան կամ անփութութեան հետեւանք է:

12 **D. G. Sellwood,** *An Introduction to the Coinage of Parthia,* London, 1980, type 80.

13 **D. G. Sellwood,** *An Introduction* ..., types 86, 87.

14 **R. Vardanyan,** *Tendenze culturali e ideologiche nell'impero partico riflesse dalla monetazione,* Parthica 3 (2001, Pisa-Roma), fig. 25.6, 27.3, 27.7-9, 28.1.

© National Library of Armenia

ման նմուշ է հանդիսացել ոչ հռոմէական դրամ, եւ որ ընդօրինակողները խստօրէն կաշկանդուած չեն եղել պատկերատիպերի ընտրութեան հարցում, եթէ իրենց թոյլ են տուել յօրինելու պարթեւահռոմէական այսպիսի հիբրիդային տիպ:

Պատկերագրական եւս մի շեղում ներկայացնում է № 55-ը: Թէեւ դարձերեսին SC տառերն են, իսկ դիմերեսը բաւական աղօտ պատկերում ունի, սակայն ոչ մի կերպ հնարաւոր չէ այն նմանեցնել դէմքի: Ամենայն հաւանականութեամբ, այստեղ պատկերուած է թեւատարած արծիւ՝ դիմացից, դէմքով դէպի աջ: Գլուխը, ուղղաձիգ մարմինը, երկու ոտքերը բաւական յստակ են, իսկ բացուած թեւերը նշմարւում են միայն որոշակի լուսաւորուածութեան ներքոյ: Այս նմուշը նոյնպէս ազատ ընդօրինակման օրինակ է: Դիմերեսին, կայսեր գլխի փոխարէն, պատկերուել է արծիւ, որը Մարկոս Աւրելիոսից սկսած (161-180 թթ.) յայտնւում է Անտիոքի պղինձների դարձերեսի վրայ՝ գոյատեւելով մինչեւ Ուրանիոս Անտոնինոսը (253-254 թթ.), սակայն անտիոքեան արծաթէ դիդրախմաների (56/7 թ.) եւ տետրադրախմաների (59/60-65/6 թթ.) դարձերեսին արծիւ սկսել էին պատկերել արդէն Ներոնի օրոք[15]:

Դրամները զուրկ են գրութիւններից: Ընդօրինակողներն անգամ չեն փորձել նմանակել լատիներէն կամ յունարէն գրութիւնները, որոնք կան իսկական դրամների դիմերեսի վրայ՝ կայսեր պատկերի շուրջը: Սակայն դրամներից երեքի դիմերեսին կան նշաններ, մի դէպքում՝ դէմքի դիմաց (№ 4), միւս երկուսում՝ գլխի յետեւում (№ 9, 17), որոնք արամէական գրեր են յիշեցնում: № 9-ի վրայ յստակ ընթերցւում է մեմ տառը: Այս դրամի դիմերեսն, առհասարակ, ինքնատիպ է. խոշոր գծիկներով արուած մեծ չափի դիմապատկեր՝ միւսներից տարբերուող ոճով:

Ընդօրինակութիւնների մէջ ճառագայթաւոր պսակով տիպը ներկայացուած է նոյն կաղապարի մէջ ձուլուած 3 դրամով: Անտիոքի SC բրոնզների վրայ ճառագայթաւոր պսակ կրող կայսեր պատկերը հանդիպում է Ա. Պիոսի, Մ. Աւրելիոսի, Լ. Վերոսի եւ մի քանի տասնամեակ ընդմիջումից յետոյ՝ Էլագաբալի դրամների վրայ: Մեր օրինակների պատկերներն այս կայսրերից որեւէ մէկի հետ նոյնացնելու հիմնաւորում գտնելը, սակայն, իրականում անհնար է: Եթէ չլինէր ճառագայթաւոր պսակը, № 52-54 դրամների «ծաղրանկարային» դիմապատկերի համար որպէս նախատիպ կարելի էր ենթադրել Հանդրիանոսի պատկերը, որի բաւական երկար քիթը եւ սրածայր դունչը կարող էին անվարժ ընդօրինակողի ձեռքով այսպիսի գրոտեսկի վերածուել: Սակայն Հանդրիանոսի անտիոքեան SC դրամներ, որտեղ կայսրը պատկերուած լինէր ճառագայթաւոր պսակով, առայժմ յայտնի չեն:

Գանձի թուագրումը: *Գանձի կազմում կայ երկու իսկական դրամ (№ 1 եւ 2)[16] թողարկուած Անտոնինոս Պիոսի օրոք (138-161 թթ.) Կորնթոսում եւ Սիրիայում: Դրամների թողարկման տարեթուերը յայտնի չեն, ուստի պէտք է ընդունել, որ գանձը կարող էր «թաղուել» Անտոնինոս Պիոսի իշխանութեան գալու տարուց՝ 138 թ., ոչ աւելի վաղ: Երկու դրամն էլ թեթեւ մաշուած են, որից կարելի է եզրակացնել, որ դրանք շրջանառութեան մէջ են եղել ոչ շատ երկար ժամանակ, յատկապէս՝ Կորնթոսում թողարկուածը[17]: Նոյնը կարելի է*

15 *Roman Provincial Coinage I*, p. 615, no. 4176, no. 4180 etc.

16 № 56-ը, ըստ երեւոյթին, նոյնպէս իսկական դրամ է, բայց չափազանց քայքայուած է եւ որոշման ենթակայ չէ:

17 № 2-ի մետաղը քայքայուած է, եզրից կոտրուած, այդ պատճառով պատկերներն ու գրութիւնները յստակ չեն:

ասել ընդօրինակութիւնների մասին: Սրանց ամենացցուն մասերը դարձերեսի SC տառերն են, որոնք պէտք է որ առաջին հերթին մաշուէին երկարատեւ եւ ինտենսիւ շրջանառուելու դէպքում, մինչդեռ այդ տառերի վրայ մաշուածութեան հետքեր գրեթէ չեն նկատւում: Իսկ դիմերեսի այն պատկերները, որոնք աղօտ ու անորոշ են, բացատրւում են երկու հանգամանքով՝ կաղապարի մէջ պատկերի ոչ խորը փորագրումով եւ ձուլման եղանակով դրամ պատրաստելու առանձնայատկութեամբ, երբ, ի տարբերութիւն հատուած դրամի, ձուլուած դրամների պատկերների նուրբ տարրերը միշտ էլ ստացւում են աղօտ եւ ոչ յստակ: Հետեւաբար, դրամների մաշուածութեան տեսանկիւնից դատելով, ընդօրինակութիւնները եւ Անտոնինոս Պիոսի դրամներն իրենց թողարկման ժամանակով՝ հեռու չեն միմեանցից:

Ե՞րբ ու ի՞նչ պայմաններում դրամների այս խումբը կարող էր վերածուել գանձի: Անտոնինոս Պիոսին յաջորդեց Մարկոս Աւրելիոսը (161-180 թթ.), որը Լուկիոս Վերոսին (161-169 թթ.) դարձրեց իր գահակիցը: Վերեւում տեսանք, որ Տրայանոսից յետոյ ընկած ժամանակաշրջանում հռոմէական դրամների գտածոներն Արտաշատում շատ աւելի սակաւ են, քան նախորդ շրջանինը: Հնարաւոր է, որ դրա պատճառներից մէկը քաղաքի հնագիտական դեռեւս անհամաչափ ուսումնասիրութիւնն է: Արաքսից ոչ հեռու, 3-4 մ խորութեան վրայ հռոմէական բաղնիքի յայտնաբերումը յոյս է ներշնչում, որ Արտաշատի ցածրադիր շատ հատուածներ ծածկուած են ջրաբերուկների հաստ շերտով, եւ հետագայ պեղումները կարող են մեծապէս ընդլայնել մայրաքաղաքի մասին այսօրուայ մեր պատկերացումները, այդ թւում՝ շրջանառութեան մէջ եղած դրամների կազմի առումով: Առայժմ ստիպուած ենք հիմնուել առկայ նիւթի վրայ, որը ցոյց է տալիս Արտաշատում դրամական զանգուածի կտրուկ նուազում Տրայանոսից յետոյ: Այս կայսեր դրամների առատութիւնն, անտարակոյս, բացատրւում է 114 թ. նրա կողմից Հայաստանի նուաճմամբ, երկիրը հռոմէական նահանգ յայտարարելով եւ պահապան զօրքեր տեղադրելով: 117 թ. նրան յաջորդած Հադրիանոսը վերականգնեց Հայաստանի թագաւորութիւնը, յետ քաշեց հռոմէական զօրքերը երկրից եւ կայսրութեան արեւելեան սահմանը կրկին դարձաւ Եփրատ գետը[18]: Հանդրիանոսի եւ Անտոնինոս Պիոսի օրոք Հայաստանը խաղաղ զարգացման շրջան ապրեց, որն ընդհատուեց միայն 134-135 թթ. ալանների ներխուժմամբ: Նրանք, աւերելով Աղուանքն ու Ատրպատականը, Հայաստանի վրայով հասան մինչեւ Կապադովկիա[19]: 140-ականների սկզբին Անտոնինոս Պիոսն, առանց պարթեւ արքայի հետ համաձայնեցնելու, Հայաստանում նոր թագաւոր կարգեց, ինչը հերթական լարուածութեան պատճառ դարձաւ երկու տերութիւնների միջեւ, բայց իր պատերազմական արտայայտութիւնը գտաւ միայն Անտոնինոս Պիոսի մահից յետոյ: 161 թ. Վաղարշ Դ պարթեւ արքայի զօրքերը մտան Հայաստան եւ թագաւոր կարգուեց Բակուրը: 163 թ., հակայարձակման անցնելով, հռոմէացիները գրաւեցին Արտաշատը, որով, կարճատեւ ընդհատումից յետոյ, Հռոմի ներկայութիւնը Հայաստանում վերականգնուեց: 164 թ. թագաւոր նշանակուեց Սոհեմը: Տրդատ սատրապի ապստամբութիւնը Սոհեմին ստիպեց 166 թ. ապաստան փնտրել Կապադովկիայի հռոմէական կառավարիչ Մարտիոս Վերոսի մօտ, որը, ապստամբութիւնը ճնշելուց եւ Սմբատին ձերբակալելուց յետոյ, Սոհեմին վերահաստատեց Հայաստանի գա-

18 Յ. Մանանդեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 30, 37:

19 Dio LXIX.15, 1-2.

© National Library of Armenia

հին[20]: Հազիւ թէ կարելի է կասկածել, որ հռոմէական բանակի հետ Հայաստան է մտել հռոմէական դրամների նոր խմբաքանակ, որում որոշակի մաս պէտք է կազմէին պղնձէ պրովինցիալ թողարկումները եւ, առաջին հերթին, գործող կայսրերի դրամները: Գանձում, սակայն, նրանց դրամներից չկան: Ուրեմն, ե՞րբ կարող էին տիրոջ համար անվերադարձ կերպով թաքցուել այս դրամները: Եթէ դա տեղի չի ունեցել դեռեւս Անտոնինոս Պիոսի իշխանութեան տարիներին, մեզ անյայտ պատճառներով, ապա հաւանական կարող է թուալ 163 թ. վերջը, երբ Ստատիոս Պրիսկոսի կողմից պաշարումով վերցուեց Արտաշատը, կամ շուրջ 166 թ., երբ Հայաստանում խոշոր ապստամբութիւն էր ծագել Տրդատի գլխաւորութեամբ: Երկու դէպքում էլ քաղաքում պէտք է որ գոյացած լինէր անհանգիստ ու անապահով վիճակ:

Անտոնինոս Պիոսի երկու պղնձէ դրամներից մէկը թողարկուած է հեռաւոր Կորնթոսում, միւսը՝ Սիրիայի Լաոդիկէա քաղաքում: Եթէ վերջինիս ներկայութիւնն Արտաշատում զարմանալի չէ, ապա կորնթոսեան, այն էլ ոչ այնքան տարածուած թողարկման յայտնաբերումն այստեղ բաւական ուշագրաւ է: 162 թ. հայերի եւ պարթեւների դէմ պատերազմի պատրաստուելիս հռոմէացիները Սիրիայում ռազմական ուժեր էին կենտրոնացրել ոչ միայն արեւելեան պրովինցիաներից, այլեւ այստեղ էին տեղափոխել մի քանի լեգէոններ արեւմուտքից՝ մասնաւորապէս Ռէյնի եւ Դանուբի շրջաններից: Դրանց թւում էր V Մակեդոնիկա լեգէոնը, որը Ստատիոս Պրիսկոսի գլխաւորութեամբ[21] մասնակցեց հայկական արշաւանքին: Սրանով, ամենայն հաւանականութեամբ, կարող ենք բացատրել Յունաստանում թողարկուած պղնձէ դրամի յայտնուելը Արտաշատում, ինչը նաեւ մի լրացուցիչ անուղղակի փաստարկ է գանձի «թաղումը» ոչ աւելի վաղ, քան 163 թ. վերջով թուագրելու համար:

Ընդօրինակութիւնների ծագումը: Եթէ ենթադրենք, թէ ընդօրինակութիւնները պատրաստուել են Արտաշատում, ապա իր այսպիսի արտադրանքի ինչպիսի՞ ընդունելութիւն կարող էր ակնկալել թողարկողը մի քաղաքում, որի բնակիչները լաւ ծանօթ էին իսկական հռոմէական դրամներին, քանի որ Ք.յ. Ա դարում եւ առնուազն Բ-ի առաջին տասնամեակներում թէ՛ կայսերական, թէ՛ պրովինցիալ թողարկումներն այստեղ, դատելով դրամագիւտերից, դրամական շրջանառութեան հիմնական միջոցն էին: Սրանք հնարաւոր չէ դիտարկել որպէս դրամանենգի արտադրանք, քանի որ շրջանառուող իսկական դրամների կողքին այդպիսի կոպիտ կեղծիքը չէր կարող ընդունուել որպէս իսկական: Արտաշատում դրամ ընդօրինակելու անհրաժեշտութիւն կարող էր ծագել միայն այնպիսի իրավիճակում, երբ խիստ պակասել էր հռոմէական դրամների ներհոսքը, իսկ դրամ օգտագործելուն սովոր շուկան կարիք ունէր դրամական զանգուածի համալրման: Եթէ այդ դրամները շրջանառուել են Արտաշատում (իսկ մենք դրանց շրջանառութեան բնոյթի մասին դեռեւս բաւարար տեղեկութիւններ չունենք)՝ ապա միայն հարկադրաբար, ինչ-որ արտակարգ իրադրութեան պայմաններում:

Հայաստանի դրամական տնտեսութեանը բնորոշ չեն եղել բարբարոսական

20 Ռ. Վարդանեան, *Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկուած պղնձէ դրամներ*,- ՊԲՀ, 2 (2004), էջ 246, որտեղ յղուած են Սոհեմի թագաւորական եւ վերահաստատման հանգամանքների ու թուագրութեան մասին վերոյիշեալ տեսակէտը պաշտպանող աշխատութիւնները:

21 **N. C. Debevoise,** *A Political History of Parthia,* Chicago, 1938, p. 247, note 34.

կոչուող ընդօրինակութիւնները՝ ի տարբերութիւն Կողքիսի, Իբերիայի եւ Աղուանքի, որտեղ դրանց մի շարք օրինակներ կան՝ սկսած Ք.ա. Գ-Ա դդ.: Հարեւանների այդպիսի արտադրանքը երբեմն թափանցել է Հայաստան[22], բայց տեղում թողարկուած ընդօրինակութիւններ յայտնի չեն:

Արդեո՞ք Արտաշատում յայտնաբերուած այս դրամները նոյնպէս բերուած են դրսից: Խնդիրն այն է, որ մեր արեւելեան եւ հիւսիսային հարեւանների մօտ այսպիսի ընդօրինակութիւնների յայտնաբերման մասին տեղեկութիւն, յամենայն դէպս՝ դրամագիտական գրականութեան մէջ, չկայ[23]: Սակայն ճիշտ նոյնպիսի SC ընդօրինակութիւնների 6 նմուշ, ինչպիսին այս գանձում է, յայտնի է Սիրիայում հաւաքուած դրամագիտական մի ժողովածոյից: Դրանց յայտնաբերման տեղն անյայտ է, սակայն դատելով անուղղակի տուեալներից, դրամները կարող են գտնուած լինել Հիւսիսային Միջագետքում, հնարաւոր է՝ Մծբինում (Նիսիբին): Սրանց պահպանուածութիւնը վատն է, մետաղը՝ քայքայուած, ինչի հետեւանքով մաքրելիս տեղ-տեղ առաջացել են անցքեր:

Դիմ.՝ աջ կիսադէմ, պատկերագրական մանրամասներն անորոշ են:

Դարձ.՝ SC, շուրջը՝ պսակի նմանակում:

ա) 3.74 գր, 25.2 մմ, 12 ժ, S տառը շրջուած՝ Ƨ C

բ) 3.92 գր, 24.0 մմ, 10 ժ, S տառը շրջուած՝ Ƨ C

գ) 5.76 գր, 26.7 մմ, 12 ժ

դ) 6.56 գր, 26.1 մմ, 12 ժ, ինչպէս գանձի № 31-38

ե) 7.89 գր, 25.2 մմ, 12 ժ

զ) 8.13 գր, 26.5 մմ, 12 ժ

Դ-ի դիմերեսի պատկերը կատարել է նոյն ձեռքը, ինչ որ գանձի № 31-38 դրամներինը՝ գլխի ետեւում ապարօշի ժապաւէնների պատկերման իւրօրինակ եղանակով: Հնարաւոր է, որ այն ձուլուել է գանձի վերոյիշեալ դրամներից որեւէ մէկի հետ նոյն կաղապարում (թւում է, թէ առաւել մօտ է № 32-ին): Ինչպէս գանձում եղած դրամների մէջ, սրանցում եւս կայ երկու օրինակ շրջուած S տառով՝ Ƨ:

Ո՞ւմ կողմից, ե՞րբ, որտե՞ղ, որքա՞ն ժամանակ եւ ի՞նչ նպատակով կարող էին թողարկուած լինել այս «դրամները»: Այս հարցերի որոշակի պատասխան այսօր չունենք: Կարող ենք առաջարկել միայն վարկածներ: Դրամների վրայ SC տառերից բացի, յունարէն կամ լատիներէն այլ գրութիւններ չկան: Դրամների ձուլման կաղապարները պատրաստուած են քանդակագործական որեւէ կրթութիւն եւ հմտութիւն չունեցող մարդու կամ մարդկանց կողմից: Բացի այդ, նկատելի է, որ առանձնապէս մեծ կարեւորութիւն չի տրուել դիմերեսի դիմապատկերները՝ քիչ թէ շատ մանրամասն ու խնամքով մատուցելու անհրաժեշտութեանը. պատկերներն

© National Library of Armenia

արուած են խիստ ընդհանուր եւ անվարժ շտրիխներով, ռելիեֆը ցածր է: Դրամները ձուլուել են կաղապարի մէջ, հաւանաբար՝ կաւէ կաղապարի: Դիմերեսի կամ դարձերեսի այսպիսի պարզունակ պատկերագրութեամբ մի կաղապար կարելի էր պատրաստել բոպէների ընթացքում՝ առանց մեծ ջանք գործադրելու: Որոշ դէպքերում դիմերեսի պատկերներն այնքան անփոյթ ու ի միջի այլոց են արուած, որ անգամ դժուար է հասկանալ, թէ ինչ է պատկերուած: Արդէն նշուեց, որ պատճառը, դրամների մաշուածութիւնը չէ, քանի որ նոյն այդ դրամների դարձերեսները, մեծ մասամբ, աւելի յստակ պատկերներ ունեն:

Վերը բարձրացուած հարցերից մէկին, թէ որքան երկարատեւ է եղել այս թողարկումը, թերեւս կարելի է պատասխանել քիչ թէ շատ որոշակիօրէն: Չնայած դիմերեսի տիպերի բազմազանութեանը, դրամների պատկերագրութեան ու ոճի մէջ փոփոխութիւնների կապակցուած շարք չի նկատւում: Կատարման տեխնիկայի տեսանկիւնից նրանք նոյնպէս միատեսակ են: Այս ամէնը թոյլ է տալիս հաւանական համարել, որ սա միանուագ կամ շատ կարճ ժամանակահատուածում կատարուած ու դադարեցուած թողարկում է: Տարբեր կաղապարների առատութիւնն ու բազմազանութիւնը, տուեալ դէպքում, մեծաքանակ արտադրանքի վկայութիւն չեն: Կաղապարները, մի քանի անգամ նրանց մէջ դրամներ ձուլելուց յետոյ, արագ շարքից դուրս են եկել եւ դրանք փոխարինուել են նորերով, որոնց պատրաստելը մեծ դժուարութիւն չէր ներկայացնում:

Ո՞ւմ կողմից կարող են թողարկուած լինել այս ընդօրինակութիւնները: Ակնյայտ է, որ սրանք չեն թողարկուել Հայաստանի թագաւորի կողմից, ոչ էլ կապ ունեն հռոմէացիների կամ պարթեւների հետ. որեւէ օրինական իշխանութիւն այսպիսի դրամներ չէր թողարկի, նոյնիսկ՝ արտակարգ իրավիճակներում: Նման թողարկում կարող էր ձեռնարկել կիսաօրինական մի իշխանութիւն, որը, իրեն մատուցուող ինչ-ինչ ծառայութիւնների դիմաց վճարելու համար, չի ունեցել օրինական դրամական միջոցներ կամ դրանք չեն բաւականացրել: Դրամներն անանուն են, թողարկողն իրեն չի ցանկացել բացայայտել կամ գովազդել: Դրամներից մէկի վրայ արամէերէն մեմ տառի առկայութիւնն ակնարկում է թողարկողի՝ արեւելեան քաղաքակրթութեանը պատկանելու մասին, բայց ոչ աւելին: SC տառերն, ըստ երեւոյթին, համարուել են բաւարար երաշխիք, որ այդ թողարկումը ընդունելութիւն կը գտնի ու վստահութեան կ'արժանանայ այն միջավայրում, որի համար նախատեսուած է եղել:

Եթէ այս թողարկումը կարող է առնչուել ինչ-որ պատմական իրադարձութեան հետ, ապա, դանձի «թաղման» terminus post quem-ը 163 թ. վերջն ընդունելով, նման ընդօրինակութիւնների ի յայտ գալու համար բարենպաստ կարող էր լինել Հայաստանում բռնկուած ապստամբութիւնը: Տրդատ սատրապի հրահրած ապստամբութիւնն այնքան ուժգին ու համատարած է եղել, որ հռոմէացիների կողմից թագաւոր նշանակուած Սոհեմը ստիպուած էր հեռանալ երկրից եւ ապաստան գտնել Կապադովկիայի լեգատ Մարտիոս Վերոսի մօտ: Ապստամբութեան ժամանակը եւ տեւողութիւնը որոշակիօրէն յայտնի չեն, բայց ենթադրւում է, որ այն պէտք է տեղի ունեցած լինի շուրջ 166 թ.: Մենք ոչինչ չգիտենք դէպքերի ընթացքի մասին, բացի այն, որ Տրդատը «Հայաստանում խռովութիւններ էր բարձրացրել եւ սպանել էր հենիոքների թագաւորին եւ իր սուրը թափահարել էր (Մարտիոս) Վերոսի վրայ, երբ վերջինս յանդիմանել էր նրան այդ բանների համար»[24]: Հնարաւոր է, որ այդ խառ-

24 Dio, LXXII, 14.2.

նակ ժամանակներում, երբ երկրում թագաւոր չկար, իսկ հռոմէացիները չէին տիրապետում իրավիճակին, յայտնուէր մի այսպիսի «ինքնագործ» դրամական թողարկում:



© National Library of Armenia





© National Library of Armenia





© National Library of Armenia

1. Դարձերեսի դետալ պղնձե թիթեղիկներով (47)

2

Ք.Յ. 37 թ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Յակոբ Յարութիւնեան

Ք.ա. I դարի վերջերին Արեւելքում եւ Մեծ Հայքում տեղի ունեցած բուռն իրադարձութիւններից յետոյ, այն է՝ Լուկուլլոսի, Պոմպէոսի, Կրասոսի եւ Անտոնիոսի արշաւանքներից յետոյ, հաստատուեց յարաբերական անդորը: Կողմերը, կարծես թէ, ուժ էին հաւաքում, վերալիցքաւորւում՝ կրկին իրենց փոխյարաբերութիւնները բացայայտելու համար: Դա պայմանաւորուած էր ոչ միայն Հռոմի կողմից չափից աւելի մեծ ուժեր վատնելով, որը համարեա թէ նրան ոչինչ չտուեց, մասնաւորապէս՝ Հայաստանում իր գերիշխանութիւնն հաստատելու առումով, այլեւ բուն Հռոմի ներսում տեղի ունեցած արմատական փոփոխութիւններով եւ նրա վերակառուցմամբ: Եթէ մինչ այդ Հռոմի՝ Արեւելք ներթափանցելու առաջին օրերից՝ Ք.ա. 190 թ. սկսած, նրա ազդեցութիւնն այստեղ աճում էր երկրաչափական պրոգրեսիայով, ապա Միհրդատեան պատերազմների ժամանակահատուածից սկսած հանրապետութիւնը հարկադրուած էր, իհարկէ, իր կամքից եւ ցանկութիւնից անկախ, վարել աւելի հաւասարակշռուած քաղաքականութիւն: Հռոմէացիները հասկացան եւ զգացին, որ արեւելեան ժողովուրդների հանդէպ պէտք է լինել առաւել ճկուն ոչ միայն պատերազմի դաշտում, այլեւ դիւանագիտութեան ասպարէզում: Այս ճեղքուածքներն առաջին անգամ իրենց գոյութեան մասին զգացնել տուեցին դեռ Լուկուլլոսի արշաւանքի օրերին, որը եւ դաս հանդիսացաւ արդէն նրան անմիջապէս յաջորդած Գնէոս Պոմպէոսի համար: Նա արեւելեան հարցերը կարգաւորելիս ցուցաբերեց նուրբ դիւանագիտութիւն, որն առաջին հերթին դրսեւորուեց Հայաստանի եւ Պարթեւստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ընթացքում: Նա չդիմեց լուկուլլոսեան բիրտ միջոցներին եւ, յատկապէս Տիգրանի հետ միջպետական հարցերը կարգաւորելիս՝ դիմեց նոյնիսկ տարածքային «նուիրատուութիւնների» քաղաքականութեան կենսագործմանը: Նա Տիգրանին տուեց Ծորոխի աւազանի հարաւային շրջանները՝ ցանկանալով ձեռք բերել նրա վստահութիւնը, բայց այս ամէնը երկար չտեւեց: Պոմպէոսին յաջորդած Կրասոսն ու Անտոնիոսը կրկին վերադարձ կատարեցին լուկուլլոսեան հին մեթոդներին, ուստի պայքարը բորբոքուեց նոր ուժով, եւ սա յուշում էր, որ Հռոմը ապրում է ոչ միայն արտաքին, այլեւ ներքին գաղափարական ճգնաժամ: Անյայտ է, թէ ինչով կը վերջանար այս ամէնը, եթէ Հռոմում տեղի չունենար պետական յեղաշրջում, եւ իշխանութեան ղեկին չյայտնուէր այնպիսի մի նշանաւոր պետական գործիչ, ինչպիսին Օկտաւիանոս-Օգոստոսն էր (Ք.ա. 27 - Ք.յ. 14 թթ.):

Նորաստեղծ Հռոմէական կայսրութեան հիմնադիր Օգոստոսը երկրի արտաքին քաղաքականութեան հիմնական սկզբունք հռչակեց pax Roman-ան, որի ամենակարեւոր տարրերից էր հանդիսանում՝ յարաբերութիւնների կարգաւորումը արեւելեան երկրների եւ պետութիւնների հետ:[1] Օգոստոս կայսեր որդեգրած քաղա-

1 Այս կապակցութեամբ աւելի մանրամասն տե՛ս **Н. А. Машкин,** *Принципат Августа,* М. Л. 1949, passim; **М. И. Ростовцев,** *Рождение Римской империи,* М. 2003, էջ 9-29, 115-133; **А. Б. Егоров,** *Рим на грани эпох,* Л. 1985, էջ 25-37, 88-102; **Дж. Бейкер,** *Август. Первый император Рима,* М. 2003, էջ 273-297. **Հ. Ասատուրեան,** *Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հա-*

© National Library of Armenia